ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- **Գործուղվող անձ**

Աշոտ Ղահրամանյան, ՀՀ Արմավիրի մարզպետ

- **Գործուղման վայրը և ժամկետները**

Ռումինիա, 2017թ. հունիսի 30-ից հուլիսի 2-ը

- **Գործուղման նպատակը**

Ռումինիայի Կլուժի նահանգի հետ համագործակցության հաստատում

- **Քննարկված թեմաները**

Այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների շրջանակներում երկու կողմերի ներկայացուցիչները ներկայացրել են իրենց շրջանների տնտեսական և ներդրումային հնարավորությունները: Այս համատեքստում ընդգծվել են ինչպես յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունները իրենց առավելություններով, այնպես էլ փորձ է կատարվել ի մի բերել այն ընդհանրությունները, որոնք պիտի դառնան երկկողմ համագործակցության հետագա նախագծերի հիմքը:

Այս առումով, մշակութային ոլորտում արդեն իսկ առկա համագործակցությանը զուգահեռ մեր կողմից ներկայացվել են մի շարք նախաձեռնություններ և Արմավիրի մարզի փորձը, որը կարող է օգտակար լինել ռումինական կողմի համար, հատկապես ձկնաբուծության և գյուղմթերքների՝ բանջարեղենի, ծիրանի, խաղողի, գինու և կոնյակի արտադրությունը, որոնցում Հայաստանը և Արմավիրի մարզը կարողացել են հաջողություններ գրանցել: Կրթության առումով առանձնահատուկ հետաքրքրություն է առաջացրել Հայասատանի հանրակրթական դպրոցներում շախմատի դասավանդման փորձը:

Կլուժի նահանգային իշխանությունները Արմավիրի մարզի պատվիրակության համար նախապատրաստել էին այցի հարուստ ու հետաքրքիր ծրագիր, որի ընթացքում ներկայացվել են նահանգի տնտեսական հնարավորություններն ու տուրիստական գրավչությունը: Հայկական պատվիրակությունը շրջայց է կատարել Կլուժ-Նապոկա քաղաքի պատմական կենտրոն, ինչպես նաև Սալինա Սուրդայի աղահանքեր, Սբ. Նիկոլայի հայտնի վանք, Սիկ գյուղ և այլն/; Կլուժում պատվիրակութոյնն այցելելմ է նաև Ռումինիայի հայոց միության Կլուժ-Նապոկայի մասնաճյուղ և Կլուժի հայագիտության ինստիտուտ:

Հայկական պատվիրակությունն այցելել է Գեռլա՝ պատմական Արմենապոլիս, որտեղ Ռումինիայի Հայկական Միության Տրանսիլվանյայի մասնաճյուղի նախագահ Իոն Էստեգաիրի ուղեկցությամբ հանդիպել է քաղաքապետ Իոն Նեսելյանի և քաղաքային խորհրդի անդամների հետ, ինչպես նաև ներկա գտնվել քաղաքի հայ

կաթոլիկ Սբ. Երրորդության եկեղեցում Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոնի առթիվ մատուցված տոնական պատարագին և հանրային հանդիսությանը:

Տեղական հեռուստատեսությունը և մամուլը լայնորեն անդրադարձել է հայկական պատվիրակության այցին:

- **Հանդիպումներ, ելույթներ**

Հայկական պատվիրակությանն ընդունել են նահանգային խորհրդի փոխնախագահներ Իշտվան Վակարը և Մարիուս Մընզատը՝ խորհրդի անդամների և ծառայությունների ղեկավարների մասնակցությամբ: Հրավիրվել էին նաև Ռումինիայի Հայոց միության նախագահ Վարուժան Ոսկանյանը, Կլուժի հայագիտության համալսարանի տնօրեն դոկտոր պրոֆեսոր Լուչիան Նաստասե-Կովաչը, մշակութային և կրթական հաստատությունների ղեկավարներ, տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ և լրագրողներ:

- **Ստորագրված փաստաթղթեր, պայմանավորվածություններ**

2017 թվականի հունիսի 30-ին Ռումինիայի Կլուժի նահանգապետարանում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի և Կլուժի նահանգի միջև համագործակցության մասին համաձայնագիր:

Երկկողմ համաձայնագիրը նախատեսում է փոխադարձ շահավետ համագործակցություն ծավալել մշակույթի, տնտեսության, կրթության, սոցիալական, սպորտի և տուրիզմի ոլորտներում, ինչպես նաև համագործակցության ձևեր գտնել երկու տարածքային միավորների հանրային հաստատությունների, ոչ կատավարչական կազմակերպությունների և ձեռնարկատիրական կազմակերպությունների միջև:

Ստորագրման արարողությունից հետո տեղի ունեցած աշխատանքային քննարկումների ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում նշել այն ոլորտները, որոնց ուղղությամբ կարելի է անել առաջին քայլերը, ինչպես նաև Կլուժի նահանգային խորհրդի կողմից կնքված համաձայնագրի վավերացումից հետո, ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով:

12.07.2017թ. **Ա. Ղահրամանյան**